

**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ
ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ**

Հովհաննես ԱՅՎԱԶՅԱՆ
ԵՊՀ ասպիրանտ

Բանալի բառեր. պետական գնումներ, գնումների գործընթաց, պետական և հասարակական կարիքներ, բյուջետային ծախսեր, պետական պատվեր

Շուկայական հարաբերությունների պայմաններում տնտեսության զարգացման, ինչպես նաև սոցիալ-տնտեսական բազմաբնույթ հիմնախնդիրների լուծման գործում իր առանձնահատուկ կարևորությամբ է հանդես գալիս պետական բյուջեն, որը տնտեսության պետական կարգավորման կարևոր լծակներից մեկն է հանդիսանում: Բյուջետային ծախսերի միջոցով պետությունը ոչ միայն լուծում է սոցիալական և տնտեսական նշանակության տարբեր հիմնախնդիրներ, այլ նաև ներգործում է տնտեսական գործընթացների վրա՝ ապահովելով զարգացման ցանկալի սցենարներ: Այս տեսանկյունից, բյուջետային ծախսերի իրականացման արդյունավետությունը և հիմնավորվածությունը հատկապես ֆինանսական միջոցների անբավարարության դեպքում, ձեռք են բերում մեծ նշանակություն: Նման պայմաններում առաջին պլան է մղվում սահմանափակ ֆինանսական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման խնդիրը, որի լուծման համար պահանջվում են տնտեսագիտորեն հիմնավորված լուծումների և մոտեցումների մշակում և կիրառում:

Բյուջետային ծախսերի կառուցվածքում զգալի տեսակարար կշիռ են կազմում պետական և հասարակական կարիքների բավարարման համար իրականացվող գնումները, ինչը ենթադրում է տվյալ գործընթացի կազմակերպման և իրականացման այնպիսի մոտեցումների կիրառում, որոնք կապահովեն այդ նպատակով հատկացվող բյուջետային միջոցների օգտագործման առավելագույն արդյունավետություն: Գործնականում գրեթե բոլոր երկրներում պետությունը հանդիսանում է ապրանքների և ծառայությունների հիմնական գնորդներից մեկը, ինչի վկայություն է հանդիսանում պետական գնումների նպատակով զգալի ծավալով բյուջետային միջոցների հատկացումը: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ պետական գնումների իրականացման առավել առաջադեմ մեթոդ է հանդիսանում մրցույթների միջոցով ապրանքների և ծառայությունների ձեռք բերումը, ինչը նպաստում է առողջ մրցակցության զարգացմանը և կարևոր տնտեսական գործիք է հանդիսա-

նում տնտեսության տարբեր ճյուղերի և ոլորտների զարգացումը խթանելու համար: Հետևաբար, կարելի է պնդել, որ պետական գնումների միջոցով պետությունը հնարավորություն ունի ոչ միայն ապահովել այս կամ այն տնտեսավարող սուբյեկտի կամ ճյուղի, այլ նաև երկրի տնտեսության զարգացման համար խթանների և որոշակի նախադրյալների ձևավորումը: Պետական գնումների մրցունակ համակարգը հանդիսանում է շուկայական տնտեսության կարևոր բաղադրիչներից, որը ենթադրում է շարունակական կատարելագործում և տնտեսական զարգացման շարունակաբար փոխվող պահանջներին բավարարում:

Ընդհանուր առմամբ, ապրանքների, ծառայությունների և աշխատանքների պետական գնումները հանդես են գալիս որպես շուկայական տնտեսության պետական կարգավորման կարևոր գործիք: Դա, նախ և առաջ, պայմանավորված է այն հանգամանքով, որ պետական գնումների բաժինը մեծ տեսակարար կշիռ է կազմում համախառն ներքին արդյունքի հետ տոկոսային հարաբերությամբ: Պետական կարիքների համար գնումները, որպես կանոն, իրականացվում են նպատակային ծրագրերի շրջանակներում և բյուջետային միջոցների հաշվին:

Միջազգային պրակտիկայում պետական պատվերների տեղաբաշխումը և դրանով պայմանավորված ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ձեռք բերումը հիմնականում իրականացվում է մրցույթների միջոցով: Շատ երկրների օրենսդրությամբ հստակ կարգավորվում են պետական գնումների կազմակերպման և իրականացման հետ կապված հարաբերությունները: Միևնույն ժամանակ, մի շարք միջազգային կազմակերպություններ ևս կիրառում են գնումների կազմակերպման հետ կապված իրենց կողմից մշակված նորմերը և մեխանիզմները:

Շուկայական տնտեսության պայմաններում ապրանքների և ծառայությունների ձեռքբերման մեխանիզմը կրում է «պրոկյուրեմենտ» անվանումը, ինչն իրենից ներկայացնում է համապատասխան լծակների և մեթոդների համախումբ, որոնք կիրառվում են գնումների իրականացման ժամանակ՝ առավելագույն արդյունավետությամբ ապահովելու ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ձեռք բերումը և, դրանով իսկ, պետական և հասարակական կարիքների բավարարումը: Պրոկյուրեմենտի հիմնական սկզբունքներն են հրապարակայնությունը, խնայողականությունը, արդյունավետությունը և հաշվետվողականությունը: Վերը նշված սկզբունքներից հիմնականը հրապարակայնությունն է, որի էությունը կայանում է գնումների գործընթացի բոլոր փուլերում թափանցիկության ապահովման մեջ: Այլ կերպ ասած, գնումների գործընթացի յուրաքանչյուր մասնակից և շահագրգիռ կողմ

պետք է հնարավորություն ունենա տեղեկանալու տվյալ գործընթացի տարբեր փուլերում իրականացվող քայլերին և գործողություններին: Հայտնի է, որ պետական գնումների համակարգն աչքի է ընկնում կոռուպցիոն և բյուջետային միջոցների ոչ արդյունավետ օգտագործման մեծ ռիսկերով: Այս առումով, հրապարակայնության ապահովումը հանդիսանում է դրանց նվազեցման անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման: Պետական գնումների իրականացման միջազգային պրակտիկան ցույց է տալիս, որ հրապարակայնության ապահովումը հնարավորություն է տալիս գնումների գործընթացում ընդգրկել մասնակիցների ավելի մեծ քանակ, ինչը մեծացնում է մրցակցությունը և ընտրություն կատարելու հնարավորությունը:

Պրոկյուրմենտի հաջորդ սկզբունքը արդարությունն է, որի էությունը կայանում է նրանում, որ մրցույթների կազմակերպման և անցկացման պայմանները, հաղթողին որոշելու չափանիշները պետք է նախապես հստակ կերով սահմանվեն և բոլոր մասնակիցների համար լինեն նույնը: Բացի այդ, պետք է բացառվեն մրցույթների անցկացման տարբեր փուլերում պայմանների փոփոխության հնարավորությունները: Արդարության սկզբունքը ենթադրում է նաև գնումների գործընթացի մասնակիցների նկատմամբ խտրականության բացառում և բոլորի համար համահավասար պայմանների ապահովում: Ըստ էության, նշված պահանջների հիմնական նպատակն առավել շահավետ և ձեռնտու պայմաններով ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ձեռք բերման հնարավորությունների ստեղծումն է: Արդարության սկզբունքն ուղղված է գնումների գործընթացի մասնակիցների համար մրցակցային հավասար միջավայրի ձևավորմանը՝ այդ նպատակով հատկացվող բյուջետային միջոցների արդյունավետության բարձրացման նպատակով: Միևնույն ժամանակ, որոշ դեպքերում, պայմանավորված ձեռք բերվելիք ապրանքների և ծառայությունների յուրահատկությամբ, ինչպես նաև տեղական արտադրության պաշտպանության անհրաժեշտությամբ, կարող են կիրառվել որոշակի մեխանիզմներ, որոնք, խոշոր հաշվով, կսահմանափակեն արդարության սկզբունքի գործնական կենսագործմամբ պայմանավորված վերոհիշյալ պայմանները:

Պրոկյուրմենտի սկզբունքները հաջորդը խնայողականությունն ու արդյունավետությունն են, որոնք, չնայած իրենց նմանությանը, ունեն նաև որոշակի տարբերություններ: Խնայողականությունը նշանակում է, որ մրցույթների կազմակերպման ընթացակարգերը պետք է իրականացվեն նվազագույն ծախսերով, մինչդեռ արդյունավետությունը ենթադրում է մրցույթների անցկացումից առավելագույն վերջնական արդյունքի ստացում: Այլ կերպ ասած, այս երկու սկզբունքների էությունը կայանում է նվազագույն ծախսերի իրականացմամբ գնումների գործընթացի կազմակերպում՝ առավել ձեռնտու

պայմաններով ապրանքների և ծառայությունների ձեռք բերման նպատակով: Վերջին հաշվով, այս դեպքում գլխավոր նպատակը պետական և հասարակական կարիքների առավել լիարժեք և ամբողջական բավարարումն է, որին էլ ուղղված պետք է լինեն պետական գնումների իրականացման ընթացակարգերը և մեխանիզմները:

Պետական գնումների կազմակերպման գործընթացի կարևոր սկզբունքներից է հաշվետվողականությունը, որի էությունը կայանում է գնումների գործընթացի մասնակիցների կողմից պայմանագրային բոլոր պահանջների կատարման և այդ վերաբերյալ համապատասխան հաշվետվությունների ներկայացման մեջ: Ըստ էության, պետք է նշել, որ հաշվետվողականությունը վերահսկողության իրականացման կարևոր գործիքներից է և, այս առումով, պետական գնումների ոլորտում այն ուղղված է բյուջետային միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացմանը: Բացի այդ, հաշվետվողականության նպատակը նաև պետական միջոցների օգտագործման ուղղությունների վերաբերյալ հասարակությանն իրազեկումն է:

Բնականաբար, գնումների արդյունավետության ապահովման կարևոր նախապայմաններից է հուսալի մատակարարների ընտրությունը: Դրա համար, նախ և առաջ, պետք է կարևորել տվյալ սուբյեկտին վերաբերող տեղեկատվության ամբողջականությունը, որը պետք է իր մեջ ընդգրկի մատակարարների ֆինանսական վիճակի, արտադրական գործունեության, աշխատանքային ռեսուրսների, գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական գործունեության, արտաքին կազմակերպությունների, այդ թվում ենթակապալառուների և նյութական ռեսուրսների մատակարարների, ֆինանսավարկային կազմակերպություններ հետ մատակարարների փոխհարաբերությունների մասին տեղեկատվություն: Հենց դա հիմք ընդունելով պետք է ընտրել հուսալի մատակարարներին:

Հանրապետությունում գնումների ոլորտում առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք դժվարություններ են ստեղծում բնականոն տնտեսական հարաբերությունների ձևավորման և զարգացման համար: Պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով ապրանքների, ծառայությունների և աշխատանքների գնումների ոլորտում բավարար չափով զարգացած չէ մրցակցությունը, ինչը չի նպաստում օպտիմալ գներով ապրանքների ձեռք բերմանը: Պետական գնումների ընթացակարգերը մեծ հնարավորություններ են ստեղծում պոտենցիալ մասնակիցների նկատմամբ խտրական մոտեցում ցուցաբերելու համար: Լուրջ խնդիրներ կան նաև մրցույթների արդյունքների գնահատման առումով, ինչը բնականաբար, այս ամենը նվազեցնում է գնումների արդյունավետությունը: Այս ամենի արդյունք

է հանդիսանում այն, որ համակարգը լի է կռուպցիոն ռիսկերով, որոնք շատ հաճախ պատճառ են հանդիսանում պետական կարիքների բավարարման նպատակով հատկացվող բյուջետային միջոցների անարդյունավետ օգտագործման, իսկ որոշ դեպքերում նաև փոշիացման համար:

Հանրապետությունում գնումների գործընթացի հիմքում նախկինում ընկած էր կենտրոնացված մոդելը, իսկ հետագայում անցում կատարվեց ապակենտրոնացված մոդելին: Ընդհանուր առմամբ, երկու մոդելներն էլ ունեն իրենց առավելությունները և թերությունները, ինչը ենթադրում է, որ առավել նպատակահարմար է այդ երկու մոդելների կոմբինացումը: Սակայն անկախ կիրառվող մոդելից, խիստ կարևոր է արդյունավետ վերահսկողական մեխանիզմների ստեղծումը, ինչպես նաև չարաշահումների հնարավորություններ տվող ընթացակարգերի բացառումը: Այս տեսանկյունից, հանրապետությունում պետական գնումների համակարգի բարեփոխումները պետք է իրականացնել երկու հիմնական ուղղություններով՝ օրենսդրաիրավական և ինստիտուցիոնալ մեխանիզմների կատարելագործման միջոցով: Առաջինը պետք է ուղղված լինի զուտ գնումների գործընթացի կատարելագործմանը, իսկ երկրորդը՝ պետական գնումների՝ որպես հայրենական տնտեսության զարգացման և փոքր բիզնեսի աջակցության գործիքի կիրառմանը:

Այսպիսով, կարող ենք նշել, որ պետական գնումների համակարգը ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում չափազանք կարևոր նշանակություն ունի, ինչը դրսևորվում է, մի կողմից, հասարակական կարիքների բավարարման, իսկ մյուս կողմից, տնտեսության տարբեր ոլորտների խթանման միջոցով:

Հովհաննես ԱՅՎԱԶՅԱՆ

Պետական գնումների կազմակերպման հիմնական սկզբունքները և մոտեցումները

Բանալի բառեր. պետական գնումներ, գնումների գործընթաց, պետական և հասարակական կարիքներ, բյուջետային ծախսեր, պետական պատվեր:

Հոդվածում ուսումնասիրվել է պետական գնումների համակարգի առանձնահատկությունները շուկայական տնտեսության պայմաններում և պետական պատվերների տեղաբաշխման հիմնահարցերը: Ներկայացվել է պետական գնումների համակարգի տեղը և դերը տնտեսական գործընթացների կարգավորման, հասարակական կարիքների բավարարման և բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման գործում: Պետական գնումների շուկայի առանձնահատկությունների վերլուծության հիման վրա բացահայտվել են այդ համակարգի զարգացման հիմնական մոտեցումները:

Оганес АЙВАЗЯН

Основные принципы и подходы организации государственных закупок

Ключевые слова: государственные закупки, процесс закупок, государственные и общественные нужды, бюджетные расходы, государственный заказ.

В статье изучены особенности системы государственных закупок в условиях рыночной экономики и вопросы размещения государственных заказов. Представлены роль и место системы государственных закупок в регулировании экономических процессов, в удовлетворении общественных нужд и в эффективном использовании бюджетных средств. В основе анализа особенностей рынка государственных закупок выявлены основные подходы развития этой системы.

Hovhanes AYVAZYAN

Basic principles and approaches of the organization of state procurements

State procurement, the procurement process, state and public needs, budget expenditure, state order

The article discusses the features of state procurements system in terms of market economy and the issues of placing of state orders. The role and the place of the state procurements system in the regulation of economic processes, in satisfaction of public needs and in the efficient use of budget funds have been presented. The main approaches for the development of the state procurements system have been identified by analyzing of the features of the mentioned system.